ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Ե-27

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղաք Երևան «27» հունվար 2015 թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռաֆիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն՝ Ավետիք Իսահակյան-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ որոշում), Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված՝ մինչև 59.051.000 գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումների (այսուհետ՝ միջոցառումներ) կատարման փուլերի ժամկետները որոշվում են առաջադրանքով և օրացուցային պլանով, որոնք սույն պայմանագրի անբաժանելի մասն են (հավելվածներ 1 և 2):

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1. Կազմակերպությունից պահանջել կատարելու սույն պայմանագրի 2.4. կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2. ցանկացած ժամանակ (այդ թվամ՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3. չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.1-ին կետով նախատեսված տուգանքը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե

ա. Կազմակերպությանը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը ՀՀ ԳԱԱ-ի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը,

2.2.2. ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.3. ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավել երրորդ անձանց,

2.2.4 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3. ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, ՀՀ ԳԱԱ-ն հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը,

2.3.5. ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2. ծրագիրը կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից հաստատված գիտական ծրագրի առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4. կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5. աշխատանքի սպասվելիք արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին անհապաղ տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6. ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում սույն պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ հայտ) մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է սույն պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ

տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7. իրականացնել ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում,

2.4.8. սույն պայմանագրով սահմանված կարգով ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ առանց այլ կազմակերպությունների պատվերների կատարման ընթացքում ստացված գիտական արդյունքների, իսկ ծրագրի ավարտից հետո՝ տարեկան ամփոփ հաշվետվություն՝ դրան կցելով աշխատանքի հանձնման-ընդունման երկկողմ ակտ,

2.4.9. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.10. ՀՀ ԳԱԱ-ի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվություն չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար ՀՀ ԳԱԱ-ի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.11. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները, ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

3.1. Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 59.051.000 _(Հիսունինը միլիոն հիսունմեկ հազար) ՀՀ դրամ:

4. Մոնիթորինգը

4.1. ՀՀ ԳԱԱ-ն ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և ամփոփիչ արդյունքները համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

4.2. Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ-ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

4.4. ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

4.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հայտն ընդունվելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2. ՀՀ ԳԱԱ-ն վճարում է կատարած աշխատանքի համար մինչև արդյունքը ստանալու անհնարինությունը պարզելը, եթե դա տեղի է ունեցել Կազմակերպությունից անկախ հանգամանքների հետևանքով:

5.3. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարում է կանխավճար՝ սույն պայմանագրով նախատեսված գումարի մինչև 92 տոկոսի չափով՝ մինչև 54.326.920 (Հիսունչորս միլիոն երեք հարյուր քսանվեց հազար ինը հարյուր քսան) ՀՀ դրամ, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս. 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

5.4. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը սույն պայմանագրով նախատեսված գումարի 8 տոկոսը վճարում է տնտեսական և այլ ծախսերի մասով հատկացված գումարից, եթե միջոցառումների իրականացման մասին հաշվետվությանը ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրվել է դրական եզրակացություն:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն են՝

ա. Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված գիտական ծրագրի հայտը,

բ. Առաջադրանքը (հավելված 1),

գ. Օրացուցային պլանը (հավելված 2),

դ. Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը (հավելված 3),

ե. Գիտական ծրագրի նախահաշիվը (հավելված 4):

9.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24

Արարատ բանկ ԲԲԸ Հ/հ 1510005175820100
ՀՎՀՀ 00005673

Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան

(ստորագրություն)

Ռ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Կ.Տ.

ՀՀԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ

ք.Երևան, Գ.Լուսավորչի 15

Զարգացման հայկական բանկ Հ/Հ 1810052011633313
ՀՎՀՀ02505623

Տնօրեն՝ Ա .Իսահակյան

(ստորագրության)

Կ.Տ.

Հավելված 1
«27» 01 2015թ.
N 4-27 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում ծրագրի
(ծրագրի անվանումը)

1. Աշխատանքի կատարման հիմքը Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջե

2. Աշխատանքի նպատակը

Ստեղծել հայ գրականության ամբողջական պատմությունը նախագրային շրջանից մինչև մեր օրերը, որը գրված կլինի առկա սկզբնաղբյուրային հիմքի և գրականագիտական արդի ըմբռնումների հիման վրա:

Հայ դասականների երկերի ակադեմիական հրատարակության շնորհիվ ճշգրտված բնագրերով և համապատասխան ծանոթագրություններով կներկայացվեն տվյալ հեղինակների ստեղծագործությունները:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (1 էջի սահմաններում)

«Հայ գրականության պատմության» ակադեմիական վեցհատորյակի շրջանակում հայ գրականությունը բազմակողմանիորեն դիտարկվել է ժամանակի պատմական համապատկերում: Թերևս առաջին անգամ կատարվել է հայ գրականության տարբեր շրջափուլերի համակողմանի քննությունը տվյալ ժամանակաշրջանների պատմա-քաղաքական համատեքստում: Ցույց է տրվում այն ազդեցությունը, որ ունեցել են քրիստոնեությունը և հայոց եկեղեցին ազգային գրականության, հայ գրողների հոգևոր աշխարհայացքի և ընդհանրապես գեղարվեստական մտածողության վրա:

Պետք է նորություն համարել այն հանգամանքը, որ վեցհատորյակում առանձնակի տեղ է հատկացվում այն հարցի ուսումնասիրությանը, թե ինչ դեր են ունեցել քաղաքական տարբեր հոսանքները և կուսակցությունները ժամանակի գրական կյանքում, և ինչպես է գեղարվեստական գրականությունն արձագանքել ժամանակի ազգային իղձերին և սոցիալական շարժումներին:

Վեցհատորյակի տարբեր բաժիններում ցույց է տրվել հայ գրականության ներքին փիլիսոփայությունը, կարելի է ասել փիլիսոփայական այն հայեցակարգը, որն ընկած է գրականության պատմության հիմքում:

Հայ գրականության պատմությունը ներկայացվում է ներքին բաժանմամբ և ըստ ժանրերի ու առանձին հեղինակներով, որով հայ գրականության քննությունը իրականացվում է պատմական մոտեցմամբ և գեղարվեստական առանձնահատկությունների հաշվառմամբ ու համաշխարհային գրականության ընդհանուր համատեքստում:

Շարադրանքն իրականացվում է ըստ հայ դասականների ճշգրտված բնագրերի, որոնց կազմումը և հրատարակումը կատարվում է զուգահեռ, նրանց մասին հրատարակված ուսումնասիրություններում տեղ գտած տեսական դրույթների հաշվառմամբ:

4. Աշխատանքի բովանդակությունը (3 էջի սահմաններում)

«Հայ գրականության պատմություն և տեսություն» ծրագրի շրջանակում գրվում է Հայ գրականության պատմության ակադեմիական վեցհատորյակը, որն ընդգրկում է հայ գրականության պատմությունը վաղ շրջանից մինչև 20-րդ դարավերջը:

Այս բազմահատորյակում հայ գրականության պատմությունը ներկայացվում է հայ ժողովրդի պատմությանը զուգահեռ ընթացող համապատասխան պարբերացմամբ՝ ըստ գրականության զարգացման երեք հիմնական փուլերի.

1. Հայ հին գրականություն - նախագրային շրջանից մինչև 17-րդ դար (հատոր I և II)

2. Հայ նոր գրականություն - 18-րդ դարից մինչև 20-րդ դարասկիզբ (հատոր III և IV)

3. Նորագույն գրականություն - 1920-ական թվականներից մինչև 20-րդ դարավերջ և արդի գրական գործընթացը (հատոր V և VI)

Հայ հին գրականության բաժինն հրատարակության է պատրաստում «Հայ գրականության պատմության» ակադեմիական վեցհատորյակի երկրորդ հատորը: Այն ընդգրկում է 11-17-րդ դարերի գրական ընթացքին, տարբեր ժանրերին, գրական դպրոցներին և առանձին հեղինակներին վերաբերվող հոդվածներն ու դիմանկարները:

Արևմտահայ բնաշխարհին վերաբերվող միջնադարյան և 19-րդ դարի բնագրերը հրատարակելու աշխատանքների շրջանակում ռուսերեն թարգմանությամբ (Քնարիկ Տեր-Դավթյանի) հրատարակության է պատրաստվել Հովհաննես Սեբաստացու 19-րդ դարի 30-ական թթ. գրված «Պատմութիւն Սեբաստիոյ» գործը:

Բաժնում առաջնային ուղղություններից է հայ միջնադարյան չափածոյի մատենագիտության կազմումը, գրական ժանրերի հին գրականությունից նորին փոխանցականության և նոր շրջանում կենցաղավարման հարցերը: Առանձին աշխատանքներ են տարվում հայ պատմագրության գեղարվեստական առանձնահատկությունների վեր հանման, այդ երկերի վավերականության և հեղինակների ապրած ժամանակաշրջանին վերաբերվող հարցերի ճշգրտման համար:

Հայ նոր գրականության բաժինն ամբողջացնում է «Հայ գրականության պատմության» վեցհատորյակի IV հատորը, որն ընդգրկում է հայ գրականության պատմությունը 19-րդ դարի 90-ական թվականներից մինչև 20-րդ դարի 20-ական թվականները: Քննարկվում են բոլոր հատորները միասնական սկզբունքով և տեխնիկական միևնույն չափանիշներով հրատարակելու հարցերը:

Հայ նորագույն գրականության պատմության բաժինն ավարտում է «Հայ գրականության պատմության» VI հատորի ամբողջացման աշխատանքները:

Սկսվել են նաև «Հայ գրականության պատմության» վեցերորդ հատորի գրության աշխատանքները և շարադրվել են մի շարք հոդվածներ և գրական դիմանկարներ, որոնք վերաբերվում են թ՛ե 1960-70 ական թթ., թ՛ե վերջին տասնամյակների գրական ընթացքին:

Բաժինը պարբերաբար անդրադառնում է ժամանակակից գրականությանը վերաբերվող հարցերին:

Հայոց ցեղասպանության հարյուրամյակի շրջանակում ուսումնասիրվել է Հայոց Մեծ եղեռնի արտացոլումը հայ և համաշխարհային գրականության մեջ: Տարբերակված քննությամբ վերլուծվել են ցեղասպանության ընկալումը, մեկնաբանումը և գեղարվեստորեն արտահայտումը հետեղեռնյան շրջանում գրական տարբեր սերունդների կողմից և գրական տարբեր ժանրերում: Տիպաբանական քննությամբ վեր են հանվել այն ընդհանուրը, ինչպես նաև տարբերությունները, որ առկա են հայ և օտարազգի հեղինակների, ինչպես նաև տարբեր սերունդներին պատկանող գրողների այս թեմայով գրված ստեղծագործություններում:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքներն արտացոլվեցին 2014թ. դեկտեմբերի 16-ին ինստիտուտում կազմակերպված «Հայոց ցեղասպանության արտացոլումը հայ և համաշխարհային գրականությունում» հանրապետական գիտական նստաշրջանում, որի զեկուցումները կտպագրվեն առանձին գրքով:

Սփյուռքահայ գրականության ուսումնասիրման բաժնում շարունակվում են «Սփյուռքահայ գրականության հանրագիտարանի» կազմման աշխատանքները: Հանրագիտարանը կազմված է Սփյուռքահայ գրականության, մամուլի և սփյուռքահայ գրողների մասին բառահոդվածներից:

Հետազոտական առանձին թեմա է Հայոց Մեծ Եղեռնի գեղարվեստական վերամեկնաբանումը սփյուռքահայ գրողների տարբեր սերունդների կողմից:

Պատրաստ է շուրջ 500 անուն գրական մամուլի և ավելի քան 600 անուն բառահոդված սփյուռքահայ գրողների մասին:

Այս հետազոտությունների արդյունքները կներկայացվեն «Սփյուռքահայ գրականության պատմության համահավաք» երկհատորյակով և «Սփյուռքահայ գրականության հանրագիտարանով»: Նույն այս աշխատանքների շրջանակում հրատարակվում է «Գրական Սփյուռք» ամենամյա տարեգիրքը:

Գրականության տեսության ուսումնասիրության ուղղությամբ կատարվել են աշխատանքներ՝ նվիրված արդի գրականագիտական ըմբռնումների համատեքստում հայ գրականության պատմության և ժանրային տիպաբանության մի շարք հարցերի քննությանը համաշխարհային գրականության հետ զուգահեռում: Քննության նման մեթոդը հնարավորություն է տվել վեր հանելու կլասիցիզմի, ռոմանտիզմի և ռեալիզմի հայ գրական միջավայրում իրար հաջորդելով ի հայտ գալու և միմյանց փոխարինելու պատմահասարակական նախադրյալները:

Արտասահմանյան գրականության և համեմատական գրականագիտության բաժնում շարունակվել են հետազոտական աշխատանքները հայ և արևմտաեվրոպական գրական- մշակութային առնչությունների վերաբերյալ: Քննվում է հատկապես Հայաստանի հավաքական կերպարի ընկալումը եվրոպական գրականության մեջ: Հրատարակության են պատրաստվել Գ. Կարագյոզյանի «Հայաստանը որպես սրբազան տարածք» և Ա. Արամյանի «Հայաստանը իսպանական ուղեգրողների նկարագրություններում» աշխատանքները: Ուսումնասիրվում են նաև օտարագիր հայ գրողների Հայոց Մեծ Եղեռնին նվիրված ստեղծագործությունները:

«Հայ դասականների երկերի գիտական հրատարակությունը» ծրագրի նպատակն է իրականացնել հայ դասականների երկերի ակադեմիական

հրատարակությունը համապատասխան ծանոթագրություններով, բնագրային տարընթերցվածներով և աղբյուրագիտական տեղեկություններով, թե տվյալ ստեղծագործությունը երբ է գրվել, որտեղ և երբ է առաջին անգամ տպագրվել և ստեղծագործական պատմությունը:

«Հայ դասականների երկերի գիտական հրատարակության» բաժինը Ավ. Իսահակյանի երկերի գիտական հրատարակության ենթաթեմայի շրջանակներում 2015թ. կտպագրի Ավ. Իսահակյանի երկերի VI (պատմվածքներ և մանրապատումներ) և VII («Ոստա Կարոյի» առաջին տարբերակ) հատորները:

Լ. Շանթի և Ն. Աղբալյանի երկերի հրատարակության ենթաթեմայի շրջանակում կտպագրվեն Լ. Շանթի երկերի վերջին 8-րդ և 9–րդ հատորները:

Տպագրության կհանձնվեն Ն. Աղբալյանի երկերի գիտական հրատարակության I և II հատորները:

Շարունակվում են ինստիտուտի ավանդական «Գրականագիտական հանդեսի» (2015թ. լույս կտեսնի ԺԵ համարը), «Գրական Սփյուռք» տարեգրքի (լույս կտեսնի V գիրքը) հրատարակությունները:

5. Գիտական աշխատանքի արդյունքների ներկայացման ձևը

Գիտական հրապարակումներ՝ «Հայ գրականության պատմության» հատորներ, հայ դասականների երկերի հրատարակությունների հատորներ, մենագրություններ, հոդվածներ:

Տնօրեն (ռեկտոր)՝ _____ (Ա .Իսահակյան)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Հավելված 2
«27» 01 2015թ.
N 27 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում ծրագրի
(ծրագրի անվանումը)

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառումներ					
	անվանումը	համառոտ բովանդակություն	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	վերջնաժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
1.	Հայ գրականության պատմություն Հտ. Բ	Ընդգրկում է հայ գրականության պատմությունը 11-րդ դարից մինչև 18-րդ դարի կեսերը	Խմբագրվում են այս հատորի համար նախատեսված և 11-17-րդ դարերի գրական ընթացքին, տարբեր ժանրերին, գրական դպրոցներին և առանձին հեղինակներին վերաբերող հոդվածներն ու դիմանկարները	Հայ գրականության պատմության համապատասխան ժամանակահատվածը կներկայացվի ակադեմիական ընդունված չափանիշներով և վերջին հետազոտությունների հիման վրա կատարված ճշգրտումներով	դեկտեմբեր	
2.	Հայ գրականության պատմություն Հտ. Գ	Ընդգրկում է հայ գրականության պատմությունը 17-րդ դարից մինչև 19-րդ դարի 70-80-	Հանձնվել է տպագրության և լույս կտեսնի 2015թ.	Կներկայացվի 17-19-րդ դարերի հայ գրականության ժանրային համակարգը հին	հունիս	

		ական թթ.		գրականությունից նորին անցման յուրահատկությունները, ինչպես նաև որոշակի վերանայմամբ կներկայացվեն մի շարք հեղինակներ և նրանց ստեղծագործությունները		
3.	Հայ դասականների երկերի ակադեմիական հրատարակություն Ավետիք Իսահակյան, երկեր, Հտ. 6-րդ	Պատմվածքներ և մանրապատումներ	Ակադեմիական հրատարակության ընդունված սկզբունքներով ներկայացվում են այս հատորում զետեղված բնագրերը	Ներկայացվում են Իսահակյանի փոքր արձակին մաս կազմող գործերը և դրանց տեղը վարպետի ստեղծագործությունների ընդհանուր համապատկերում	նոյեմբեր	
	Հտ. 7-րդ	«Ուստա Կարոյի» առաջին տարբերակ			հոկտեմբեր	
4.	Լևոն Շանթ, երկեր, Հտ. 8-րդ	Լ. Շանթի քաղաքական հրապարակախոսական	Այս հատորը կարևորվում է ժամանակի հասարակական-		դեկտեմբեր	

		գործերը	քաղաքական հայացքների և առկա քաղաքական ուղղությունների ուսումնասիրման տեսանկյունից			
5.	Նիկոլ Աղբալյան, երկեր, Հտ. 1-ին	Հայ գրականության պատմություն	Կարևորվում է հայ գրականության պատմության ուսումնասիրման տեսանկյունից		դեկտեմբեր	
6.	Նիկոլ Աղբալյան, երկեր, Հտ. 2-րդ	Գրականագիտական ուսումնասիրություններ	Կարևորվում է հայ գրականության պատմության ուսումնասիրման տեսանկյունից		նոյեմբեր	
Ընդամենը					19.01.2015թ	59051,0

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան

(ստորագրություն)

ՀՀԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ

Տնօրեն՝ Ա.Իսահակյան

(ստորագրություն)

Հավելված 3
«27» 01 2015թ.
N 2-27 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պայմանագրի գնի մասին համաձայնություն

Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում ծրագրի

Մենք՝ ներքոստորագրյալներս, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ) և ի դեմս ՀՀԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ ՊՈԱԿ-ը, տնօրեն՝ Ավետիք Իսահակյան-ի, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «27» 01 20..թ. N 2-27 պայմանագրով աշխատանքի արժեքի վերաբերյալ՝ 59.051.000_(Հիսունհինգ միլիոն հիսունմեկ հազար) ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	ՀՀԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24	ք.Երևան, Գ.Լուսավորչի 15
Արարատ բանկ ԲԲԸ Հ/հ 1510005175820100 ՀՎՀՀ 00005673	Զարգացման հայկական բանկ Հ/Հ 1810052011633313
Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան	Տնօրեն՝ Ա. Իսահակյան
(ստորագրության)	(ստորագրության)

Հավելված 4
«27» 01 2015թ.
N 2-27 պայմանագրի

Գիտական ծրագրերի նախահաշիվ

NN ը/կ	ծախսերի հոդվածների անվանումը	ընդամենը (հազար դրամ)	այդ թվում			
			1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	աշխատավարձ և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ	48180.0	9636.0	12045.0	12045.0	14454.0
2	տնտեսական և այլ ծախսեր	10871.0	2174.2	2717.7	2717.7	3261.4
3	ընդամենը	59051.0	11810.2	14762.7	14762.7	17715.4

Տնօրեն(ռեկտոր)՝ _____ (Ա.Բաբահակյան)
(ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ՝ _____ (Ս.Սոլակյան)
(ստորագրություն)

Կ.S.